

Իննեւտասներորդ դարուս սկիզբները գողցես նոր կենդանութիւն առաւ նաեւ մեր ազգը՝ տպագրութեան արուեստին ծաղկելովը. բայց 1823 թուականէն ետքը տպագրութիւնը աւելի առաջ երթալով՝ օրագիրներ եւս սկսան հրատարակուիլ ու շատնալ մեր մէջ: Այս յայտնի է թէ ինչպէս որ լեզուի մը հարստութիւնը գրականութեան տարածուելովը կլինի, այսպէս եւս սր եւ իցէ ազգի մէջ օրագրաց կամ լրագրաց շատութիւնը՝ ազգային բարոյական դաստիարակութեան, եւ ամէն տեսակ քաղաքակրթութեան եւ լուսաւորութեան դիւրութիւնն է. իսկ դիւրութիւնները ըստ մեծի մասին յառաջացած են տպագրութեան ձեռքովը, որ նաւին առագաստները լցուցանող հողմայնման՝ լուսաւորութիւնը առաջ քշեց եւ տարաւ այնպիսի անկարծելի արագութեամբ, որ եթէ ինքը՝ այն մարդկութեան բարերար կութեամբէրկը՝ իւր աչքովը տեսնէր, զարմացմամբ պիտի նայէր իւր հրաշալի գիւտին յաջողութեանը վերայ. եւ այս է պատճառը որ կասեն թէ «Ազգի մի լուսաւորութեան չափը՝ իւր մէջ ունեցած տպարաններու շատութենէն կճանչցուի»: Ուրեմն եթէ տպարանն ու տպագրութիւնը այսքան մեծ նշա-

նակութիւն ունին աշխարհիս մէջ, պէտք է որ մեր եւս ճանաչելով նորա թանկ արժեղութիւնը՝ ի գործ չդնեմք զայն սնտուի եւ վնասակար բաներու:

Մեր ժամանակն ու տպագրութեան գործագրութիւնը ոչ թէ այնպիսի բաներու կկարօտին, այլ կպահանջեն՝ մանաւանդ մեր ազգին մէջ ծաւալել այնպիսի հոգի մի՝ որոյ նպատակը լինի ընդհանուր յառաջադիմութիւն, ճշմարիտ ազգասիրութիւն, բարոյական բարգաւաճութիւն, համանմանից կարեկցութիւն եւ միաբանութիւն: Մեզ պէտք չեն երբէք խռովութիւններ, կռիւներ, երկպառակութիւններ, ատելութիւններ. այլ սոցա հակառակ՝ պէտք է բաց եւ հեռատես աչքով նայեմք մեր շրջակայ լուսաւորեալ ազգերուն, եւ ընդունիմք այն ամենայն ազգաշինութեան միջոցները, որոց անունն է աշխոյժ, ջանք, միութիւն եւ յառաջադիմութիւն, որը եւ միայն կարող են պահպանել աշխարհիս մէջ մեր պատուաւոր ազգ լինելուն փառքն ու պարծանքը:

ՅՈՎՀԱՆԵՍ ՏԷՐ ԱՐԲԱՍԵԱՆ:

### ԹԵՈԴՈՍԻՈՅ ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ.

Թէ որ կայ ժամանակ մը յորում ազգային գործողութեան զբաղած անձինք պէտք է խորհրդաւոր լուծեամք մը՝ բայց աւելի եռանդեամբ ու անխնջ ջանիւք բան առաջ տանին, անշուշտ այն ժամանակն է յորում ամենուրեւ աչքը այն գործողութեան վրայ դարձած է, եւ շատին բերանը անոր վրայ բացուած՝ իրարու համաձայն եւ անհամաձայն խօսքեր կտարածեն ազգին մէջ: Այսպիսի ժամանակ է նաեւ Խալիպեան Ուսումնարանին համար այս տարիս՝ յորում երրորդը կվերջանայ ու չորրորդը կսկսի:

Բայց քանի մը օրինաւոր պատճառներէ, եւ աւելի՝ բարեկամաց անկեղծ հարցմունքներէն ու եռանդուն յորդորանքներէն, հարկադրեցանք այժմէն համառօտ տեղեկութիւն մը տալ հասարակաց՝ ազգային ուսումնարանիս այժմու վիճակին վրայ, եւ յուսամք թէ ասով ալ կհասնիմք մեր մերձաւոր նպատակին՝ որ է ընդհանրապէս ազգասէր բարեսի-

րաց սիրտը հանգչեցնել, եւ մասնաւորապէս ուսումնարանին մէջ զաւակ ունեցող ծնողաց միտքը եւ սիրտը ազատ պահել ամէն տեսակ պղտորութենէ ու տարակուսանքէ:

Թէոդոսիոյ ուսումնարանը աշխարհիս սր եւ իցէ կողմի Հայերուն համար բացուած լինելով, մէջի ուսումնական կարգադրութիւնն ալ իհարկէ այնպիսի ընթացք մը պիտի ունենայ որ յարմար դայ՝ որչափ որ կարելի է՝ ամէն տեղի Հայերուն ուսումնական պիտոյիցը. այսինքն մէջի աշակերտները սովորին այնպիսի ուսմունք եւ լեզուներ՝ որ անօգուտ չլինին իրենց, երբոր դառնան իւրաքանչիւրն իրենց տունն ու հայրենիքը: Այս մեծ ու դիւսաւոր դժուարութիւնը դիւրացնելն, ու գործը անխախտ կարգի մը դնելը՝ հարկաւ ժամանակի կարօտ է, այսինքն գոնէ տասը կամ վեց կամ ութը տարուան, եւ սակայն նաեւ այս երեք տարուանս մէջ ըստ բաւականին հասկըցուեցաւ թէ ասոր հնարքն



ինչ է, եւ ըստ այնմ՝ կպատրաստուի ահա ուսումնարանին կարգադրութիւնը :

Այժմու 131 աշակերտաց մէջէն

|                         |    |
|-------------------------|----|
| Ագուլցիներն են .....    | 7  |
| Ագքիրմանցիք .....       | 3  |
| Աժտէրխանցի .....        | 1  |
| Ալեշքալցի .....         | 1  |
| Ախալցխացի .....         | 1  |
| Ամասիացի .....          | 1  |
| Աշտարակցի .....         | 1  |
| Գանձակցի .....          | 1  |
| Գրիգորուպօլսցիք .....   | 5  |
| Երեսանցիք .....         | 4  |
| Եւպատորիացիք .....      | 2  |
| Զմիւռնացի .....         | 1  |
| Էջմիածնցիք .....        | 3  |
| Թէրոսիացիք .....        | 15 |
| Խարքովացի .....         | 1  |
| Խարասուցիք .....        | 14 |
| Կոստանդնուպօլսցիք ..... | 3  |
| Կորեցի .....            | 1  |
| Հին-Խրիմցիք .....       | 4  |
| Մեկիթփոլցիք .....       | 3  |
| Մոլտաիացիք .....        | 3  |
| Նողայցիք .....          | 2  |
| Նոր Նախիջեւանցիք .....  | 19 |
| Նուխեցի .....           | 1  |
| Սեւասթոփոլցիք .....     | 2  |
| Սիմֆերոփոլցիք .....     | 10 |
| Տրապիզոնցի .....        | 1  |
| Տփլիսեցիք .....         | 7  |
| Քիչնեցիք .....          | 5  |
| Օտեսացիք .....          | 5  |
| Օրպազարցիք .....        | 4  |

Ընդամենացն ..... 131

Այս տարի ամառուան պարապոյ օրերուն ութսունի չափ աշակերտք արձակուեցան իրենց տները՝ մինչեւ Նախիջեւան, Քիչնեւ, Ագքիրման եւ Խրիմու ամէն քաղաքները. եւ ամսէ մը ետեւ, երբոր ամէնքն ալ դարձան եկան իրենց ուսմունքն առաջ տանելու, ուսումնարանին վերատեսուչները ուրախութեամբ տեսան որ ծնողք եւ ամենայն տեսողք գոհ եղեր են այն աշակերտաց սակաւ ժամանակի մէջ ցուցուցած յառաջադիմութեանը վրայ. որով եւ կյուսան թէ քանի մը տարիէն եւս առաւել արգիւնաւոր պիտի տեսնեն իրենց աշխատութիւնն ու ջանքը :

Օգոստոսի 7-ին սկսաւ ուսումնարանին մէջ տարեկան ուսմանց դասախօսութիւնը, եւ յունիսի ետքերն եղած հարցաքննութեանց նայելով՝ փոխադրեցան աշակերտք վարի դա-

սարաններէն վերինները՝ ըստ առաջիկայ ցուցակիդ .

ՆԱԽԱԿԹԱՐԱՆ.

1. Աղամալեան Յովնանէս .
2. Թրդեան Աւետիք .
3. Խանով Գէորգ .
4. Լազարով Գէորգ .
5. Խալայճեան Յովնանէս .
6. Խոնայեան Գարբէլ .
7. Խոնապարոնեան Եղիա .
8. Կիւմիւշեան Համբարձում .
9. Միրզայեան Յովակիմ .
10. Շահիպեան Մարտիրոս .
11. Սադունեան Աստուածատուր .
12. Սեմերեան Յովնանէս .
13. Քալանդարեան Սարգիս .
14. Քասապեան Աստուածատուր :

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ.

1. Ալաճալեան Ղուկաս .
2. Ալաճալեան Մինաս .
3. Ալեանագեան Վրթանէս .
4. Ալթունճեան Աղեքսանդր .
5. Ասլանեան Բաղդասար .
6. Ասագեան Մկրտիչ .
7. Ասլեան Մատթիա .
8. Բեկնազարեան Ղազարոս .
9. Բորով Կարապետ .
10. Գալիագճեան Սուքիաս .
11. Գանձապետեան Վահան .
12. Երամեան Եղուարդոս .
13. Էթիքեան Յովնանէս .
14. Էրիկեան Յովնանէս .
15. Թովալեան Գէորգ .
16. Խաթրանեան Պողոս .
17. Մարկոսեան Մկրտիչ .
18. Մընկեան Աղեքսանդր .
19. Մինասեան Լուսեղէն .
20. Մուշեղեան Կարապետ .
21. Մուրատեան Կարապետ .
22. Մսերեան Խաչիկ .
23. Յովակիմեան Յովակիմ .
24. Շահնապետեան Մարգար .
25. Չեռնով Յակոբ .
26. Չէմպերճեան Յովնանէս .
27. Պոյաճեան Թորոս .
28. Ջալալեան Նիկողայոս .
29. Սագինեան Ղազարոս .
30. Սեյինեան Մկրտիչ .
31. Սուպաշեան Նիկողայոս .
32. Սուպաշեան Պետրոս .
33. Տիրացուեան Ծերոն .
34. Քասապեան Յարութիւն .
35. Քալանդարեան Բաղդասար .
36. Քըրմեան Խաչիկ :



## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ.

1. Ալաճալեան Մարկոս .
2. Աստուածատրեան Յովհաննէս .
3. Արուծեան Սիմէոն .
4. Գեղամեան Յովակիմ .
5. Եազարհարեան Մկրտիչ .
6. Թերզեան Գրիգոր .
7. Թովալեան Կարապետ .
8. Խազանճեան Յարութիւն .
9. Խաչատրեան Յակոբ .
10. Խոճապարոնեան Կարապետ .
11. Խուպեան Կարապետ .
12. Հախնազարեան Սարգիս .
13. Զիճուլեան Գրիգոր .
14. Մանիսացեան Գրիգոր .
15. Մելքումեան Աթանազիոս .
16. Մերճանեան Յովհաննէս .
17. Մոմճեան Անտոն .
18. Մոմճեան Մարգար .
19. Մուրատեան Յարութիւն .
20. Մսերեան Մարտիրոս .
21. Մսերեան Մկրտիչ .
22. Մրզայեան Մերկեան .
23. Մրզայեան Մկրտիչ .
24. Շահիպեան Սարգիս .
25. Պետրոսեան Արսէն .
26. Պոյաճեան Սիմէոն .
27. Սամուէլեան Գրիգոր .
28. Սամուէլեան Մովսէս .
29. Սելինեան Յովհաննէս Բ .
30. Սիմէոնեան Գէորգ .
31. Սիմէոնեան Ներսէս .
32. Սպանդարեան Կոստանդին .
33. Սպանդարեան Սպանդար .
34. Սպենտիարեան Ղազարոս .
35. Ստամբուլեան Յակոբ .
36. Քիւրքեան Սերովբէ .
37. Քրքմեան Նշան :

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ.

1. Աղապալեան Մկրտիչ .
2. Գալէմբեարեան Գրիգոր .
3. Գաւթեան Տիգրան .
4. Թամսիզեան Գրիգոր .
5. Թէրզեան Կարապետ .
6. Խուպեան Աղեքսանդր .
7. Ծերունեան Ծերոն .
8. Ճեմանեան Մկրտիչ .
9. Մազումեան Մկրտիչ .

10. Մամիկոնեան Սիմէոն .
11. Մանտրաճեան Կարապետ .
12. Մարտիրոսեան Խաչատուր .
13. Մարմարեան Գասպար .
14. Մուրատեան Յովսէփ .
15. Նաւասարդեան Փիլիպպոս .
16. Շիշլիկեան Մանուէլ .
17. Զէմպէրճեան Գէորգ .
18. Զէմպէրճեան Սարգիս .
19. Պարխուտարեան Ստեփանոս .
20. Պիճոյեան Մարտիրոս .
21. Սաղիմեան Պետրոս .
22. Սուքիասեան Յովհաննէս .
23. Ստեփանեան Կոստանդին .
24. Վլզլզեան Համբարձում .
25. Տաւուտեան Աւետիք .
26. Տաւուտեան Յակոբ .
27. Փախալեան Սիմէոն :

## ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ.

1. Ալթունճեան Կոստանդին .
2. Ալթունճիեան Գրիգոր .
3. Երէցփոխանեան Կարապետ .
4. Իւանով Աղեքսանդր .
5. Զեռնիկեան Պետրոս .
6. Պաղտիկեան Քրիստոստուր .
7. Պապիեան Մանուկ .
8. Պոլուպէկեան Գրիգոր .
9. Ստեփանոսեան Քերովբէ :

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ.

1. Ալթունճեան Գաբրիէլ .
2. Եղիազարեան Բարսեղ .
3. Մազեբով Ներսէս .
4. Մարութեան Սարգիս .
5. Պալասանեան Դաւիթ .
6. Սելինեան Յովհաննէս Ա .
7. Ստեփանոսեան Խաչատուր .
8. Տաւուտեան Յարութիւն :

Ինչպէս որ այս ցուցակէն եւս յայտնի է, մինչեւ ցայժմ չորս դասարան միայն կար ուսումնարանին մէջ . այս տարի աւելցաւ նաեւ Հինգերորդը, բայց ինչպիսիք թարանէն : Դալ տարի երբ վեցերորդն ալ աւելնայ, ուսումնարանին ամէն դասարաններն եւս կամբողջանան :

Տարւոյս Օրացուցին Օգոստոսի առաջին յանելուկն է Թոմիթ, Գրեթ, ՍԶՔ, ՄԱՏՈՒՆՔ, ԳԼՈՒԽ. — Երկրորդը՝ ԱՂ. — Երրորդը՝ ՓԵՏՐՈՒԱՐ :

Հրամայեցաք սպազրել. իմեղոսիս, ի11 Օգոստոսի 1861. Դարրիէլ Վ. Այվազեան.

ԻՏԱՐԱՆԻ ԽԱՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ :